«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1917-1918 ԹԹ.)

Անի Խաչատրյան
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ,
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտ
anixach-94@mail.ru

Գայանե Հովհաննիսյան
ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, ասպիրանտ
gayane.hovhannisyan-1993@mail.ru

Արցախը կամ պատմական Հայաստանի տասներորդ աշխարհը, հայոց նորագույն պատմության հենց սկզբից, հավատարիմ իր ազատատենչ ոգուն, դարձավ հայության պայքարող ու անկոտրում ոգու կրողն ու արտահայտիչը: 1917 թ. դրությամբ Արցախի լեռնային հատվածի հայ բնակչությունը կազմում էր շուրջ 240 հազար մարդ[1]: Հարկ է նկատել, որ ցարական իշխանությունների կանխամտածված քաղաքականության հետևանքով Արցախը ռուսական տիրապետության շրջանում միացվել էր թուրքական հարթավայրային շրջանների հետ, մինչդեռ «Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի լեռնային մասերը-Խաչեն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ-կազմում են մի ամբողջություն՝ հայ հոծ ազգաբնակչությամբ»[2]:

1917 թ. ռուսական երկու հեղափոխությունները նոր իրադրություն ստեղծեցին տարածաշրջանում: Փետրվարյան հեղաշրջման հետևանքով տապալվեց Ռոմանովների շուրջ երեքհարյուրամյա տիրապետությունը: Ինչպես կայսրության մյուս երկրամասերում, այնպես էլ Արցախում այն ընդունվեց մեծ խանդավառությամբ: 1917 թ. մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿոմ), որի կարգադրությամբ ստեղծվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ: Երկրամասը ղեկավարելու համար մարտի 12-ին կազմակերպվեց Արցախի գործադիր կոմիտեն[3]: Փետրվարյան հեղափոխությունից հետո հավանություն տրվեց հայ ժողովրդի նվազագույն պահանջներին. Ժամանակավոր կառավարությունը արդարացի համարեց Անդրկովկասի համար նախագծված վարչական նոր բաժանումը, ըստ որի Արցախը, Գանձակը, Ախալքալաքը և Շարուր-Նախիջևանը ճանաչվելու էին հայկական տարածքներ: Այս հանգամանքն, ինչպես նաև մահմեդականների կրոնական անհանդուրժողականությունն, ավելի խորացրին անվստահությունը հայերի և թուրք-թաթարների միջև: Արդյունքում Արցախի գործադիր կոմիտեն կազմալուծվեց:

1917 թ. բոլշևիկյան Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր ընթացք տվեց զարգացող դեպքերին, փոխվեց քաղաքական իրադրությունը: Դեկտեմբերի 23-ին Շուշիում ստեղծվեց Միջկուսակցական Բյուրո, որը տիրող փաստական անիշխանության պայմաններում, ըստ էության, իր ձեռքը վերցրեց լեռնաշխարհի կառավարումը[4]: Բյուրոն, իր հերթին, ընտրեց իր ղեկավար մարմինը՝ Կոմիսարների

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 59, թ. 1-5:
[2] Վրացյան Ս., Հայաստանի հանրապետություն, Երևան, 1996, էջ 327:
[3] Տես Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 7:
[4] Տես Ղահրամանյան Կ., Ղազիյան Ա., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Պետականության ակունքները, Երևան, 2008, էջ 51:

խորհուրդ՝ ՀՅԴ անդամ Հ. Մուսայելյանի նախագահությամբ: Միջկուսակցական Բյուրոյի նախաձեռնությամբ ստեղծվում է նաև ազգամիջյան կոմիտե, որի կազմում ընգրկված էին 6 հայ և 6 թաթարներ՝ մուսուլմանական Ազգային խոհրդի կողմից[1]:

Անդրկովկասում նոր իրադրության ստեղծումը կապված էր 1918 թ. մայիսյան իրադարձությունների հետ: Անկախ հռչակված երեք հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) միջև հենց սկզբից ի հայտ եկան մի շարք տարածքային-սահմանային վեճեր: Հատկապես սուր բնույթ ստացան հայ-ադրբեջանական հարաբերությունները. պատմության թատերաբեմում հայտնված Ադրբեջան հանրապետությունը՝ նախկին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները հռչակելով ադրբեջանական, հավակնություններ ներկայացրեց գերազանցապես հայաբնակ և պատմական Հայաստանի անքակտելի հատվածներ հանդիսացող մի շարք գավառների, և առաջին հերթին՝ Արցախի և Զանգեզուրի նկատմամբ: Առաջնորդվելով ազգային գաղափարախոսություն դարձած համաթուրանական գաղափարախոսությամբ՝ Թուրքիան, և Կովկասում նրա որդեգիր Ադրբեջանի նորաստեղծ հանրապետությունը ձգտում էին վերացնել հայկական խոչընդոտը՝ անէացնելու համար իրենց միջև գոյություն ունեցող անջրպետը: Այս առումով հատկանշական է Կովկասյան ճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի՝ դեռևս Բաթումի բանակցությունների օրերին հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին ուղղված հետևյալ խոսքերը. «Դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճամբուն վրա: ... Դուք պետք է մի կողմ քաշուիք և մեզի ճամբա տաք: Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժուելու և պաշտպանուելու: Մեկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կտանի դեպի Գանձակ, մյուսը՝ կերթա Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով Քուռի հովիտը»[2]: Իսկ Արցախը խոչընդոտ էր հանդիսանում Ջուլֆայի գծով և Գանձակից դեպի Բաքու շարժվող թուրքական զորամասերի միավորման համար: Հետևաբար հասկանալի է դառնում, որ Արցախն Ադրբեջանի և նրա հովանավորյալ Օսմանյան Թուրքիայի համար սոսկ տարածքային խնդրի չէր. «այն առանցքն էր համաթուրանական շահախնդրությունների առանցքը կազմող մի գերխնդրի»[3]:

Ստեղծված բարդ քաղաքական իրադրության պայմաններում Արցախում գործող քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում՝ Թեմական դպրոցի դահլիճում անցկացվեց երկրամասի հայության առաջին համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին շուրջ 180 պատգամավոր[4]: Համագումարը Արցախը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, կամվեց յոթ հոգուց բաղկացած «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»՝ Ե.Իշխանյանի նախագահությամբ: Ստեղծվում է նաև կառավարության օրգան՝ «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը, որի առաջին և միակ համարը լույս տեսավ 1918 թ. օգոստոսի 19-ին: Պաշտոնաթերթում տպագրվեց Ազատ Արցախի ժողովրդական կառավարության հայտարարագիրը (դեկլարացիան), որտեղ հույս էր հայտնվում, որ արցախահայությունը իր

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 52:
[2] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 77:
[3] Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Երևան 1994, էջ 23:
[4] Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 24-25:

պայքարով կարող է հասնել ռուսական հեղափոխության հայտարարած վսեմ գաղափարներից մեկի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի գործնականացմանը[1]:
1918 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, Աղդամ, Շուշի, Կարյագինո, Ջիբրայիլ և այլ շրջաններ են ժամանում թուրք զինվորականներ, որոնք շուտով նշանակվում են այդ շրջանների պարետներ: Միաժամանակ Կովկասում թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան շտապում էր որքան հնարավոր է շուտ հնազանդեցնել Արցախը: Հայտնի է, որ 1918 թ. հուլիսի կեսերին Գանձակից Շուշի է ուղարկվել մի պատվիրակություն, որը պետք է Արցախի բնակչությանը նախապատրաստեր առանց դիմադրության ընդունել թուրքական հրամանատարության և Ադրբեջանի մուսավաթական կառավարության կարգադրությունները[2]: Սակայն արցախահայությունը, մերժելով այս առաջարկը, պատրաստ էր մինչև վերջին շունչը պայքարել թուրք-մուսավաթական զավթիչների դեմ: Դրա առաջին քննությունը հանդիսացան 1918 թ. ամռան վերջին և աշնան ամիսներին տեղի ունեցած ընդհարումները: Թուրք զավթիչներն ու մուսավաթականները համոզվելով, որ խաղաղ ճանապարհով չեն կարող ստիպել հայերին հնազանդվել իրենց, որոշեցին Արցախի հայության դիմադրությունը ճնշել զենքի ուժով: 1918 թ. սեպտեմբերի սկզբին թուրքական երկրորդ դիվիզիան, Ջեմիլ Ջահիդ բեյի հրամանատարությամբ, Եվլախից շարժվեց դեպի Շուշի՝ ճանապարհին ավերելով հայկական գյուղերը:

Հայության համար դժվարին իրադրության պայմաններում՝ 1918 թ. սեպտեմբերի 6-ին գումարվում է Արցախի հայության երկրորդ համագումարը՝ 101 պատգամավորների մասնակցությամբ[3]: Այդ օրերին է, որ Աղդամում գտնվող Ջահիդ բեյը վերջնագիր է ներկայացնում արցախահայությանը՝ անձնատուր լինելու և երեք օրվա ընթացքում բոլոր զենքերը հանձնելու պահանջով: Մերժելով վերոնշյալ վերջնագիրը՝ համագումարը որոշում է պատվիրակություն ուղարկել Ջահիդ բեյի մոտ և խնդրել տաճկական հրամանատարությանը միջնորդել «...ներկայանալ Բագւում Ազերբեջանի կառավարութեանը և անմիջական բանակցութիւն վարել նորա հետ»[4]: Ի պատասխան, Ջահիդ բեյը նոր պահանջներ է ներկայացնում հայ պատվիրակներին, որպիսիք են՝ անհապաղ ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը, զինաթափվել և թուրքական զորքերի համար ճանապարհ բացել դեպի Շուշի[5]:

Թուրքական նոր վերջնագիրը քննարկելու նպատակով էլ 1918 թ. սեպտեմբերի 17-ից 22-ը գումարվեց արցախահայության երրորդ արտակարգ համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին շուրջ 300 պատգամավոր[6]: Հաշվի առնելով զենք-զինամթերքի պակասը, ինչպես նաև հայ-մուսուլմանական նոր ընդհարումները կանխելու նպատակով, համագումարը որոշում է ընդունում թույլատրել Շուշի մտցնել թուրքական կանոնավոր, փոքրիկ զորագունդ, որը պետք է տեղավորվեր քաղաքի մուսուլմանական թաղամասում:

---

[1] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов (ред. Микаелян В.), Ереван, 1999, էջ 14:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 19-20:
[3] Տե՛ս Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 197:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 11 շրջ.:
[5] Տե՛ս Нагорный Карабах в международном праве и мировой политике. документы и комментарии, том I, (ред. Барсегов Ю.), Москва, 2008, էջ 236:
[6] Տես «Մշակ», 27 փետրվարի, 1919թ.:

Միանշանակ արգելվում էր ադրբեջանական զինված ուժերի՝ կանոնավոր կամ անկանոն, մուտքը Շուշի[1]:

Թուրքական զորքերի հետևից, սակայն, թալանի նպատակով երկրամաս շարժվեցին նաև ադրբեջանական հրոսակախմբերը, որի հետևանքով ավերվեցին և թալանվեցին Ասկերանի շրջանի բազմաթիվ բնակավայրեր: Նման պայմաններում Արցախի ինքնապաշտպանության ուժերը դիմեցին զենքի: Թուրք-ադրբեջանական հրոսակներն ստիպված էին ամեն մի բնակատեղի մտնել մարտերի գնով: Եւ, չնայած հայկական կողմի դիմադրությանը, թուրքական առաջապահ զորամասերը (մոտ 2000 հոգի) Ջահիդ բեյի գլխավորությամբ սեպտեմբերի 26-ին կարողացան մտնել Շուշի[2]: Թուրքական հրամանատարությունը ցրեց Արցախի ժողովրդական կառավարությունը, ձերբակալեց ավելի քան 60 մտավորականի, որոնց թվում էր երկրամասի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ե.Իշխանյանին:

Թեև Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները շարունակեցին մնալ անառիկ: Մարտակերտի հայության հերոսական դիմադրության շնորհիվ կանխվեց թուրքերի մուտքը Զրաբերդի շրջան: Ահեղ մարտեր ծավալվեցին նաև Վարանդայի և Դիզակի շրջաններում:

Հարկ է ընդգծել, սակայն, որ թուրքական տիրապետությունը գրավված տարածքներում երկար չի տևում. 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարով Օսմանյան Թուրքիան ճանաչեց առաջին համաշխարհային պատերազմում կրած իր պարտությունը և զորքերը ետ քաշեց մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Անդրկովկասից դուրս բերվեցին նաև գերմանական զորքերը, որոնց փոխարինելու եկան պատերազմում հաղթանակած Անտանտի, ի մասնավորի՝ Անգլիայի զորքերը:

Անգլիական զինվորական հրամանատարությունը, գեներալ Թոմսոնի գլխավորությամբ, շտապեց սերտ հարաբերություններ հաստատել Ադրբեջանի կառավարության հետ: Բրիտանական կողմի այդպիսի դիրքորոշման նպատակն էր Ադրբեջանը դարձնել բոլշևիզմի դեմ պայքարի ամուր հենարան, տիրանալ Բաքվի նավթին, ապա ձեռնամուխ լինել ազդեցության ոլորտների տարածմանը ամբողջ Անդրկովկասի, հետագայում նաև՝ Մերձավոր և Միջին Արևելքի վրա: Իր հերթին, մուսավաթական կառավարությունն էլ ցանկանում էր բրիտանական զենքն օգտագործել Արցախն ու Զանգեզուրը նվաճելու համար:

Հաստատվելով Անդրկովկասում՝ (1918թ. նոյեմբեր) անգլիացիներն ամեն կերպ փորձում էին սիրաշահել մուսավաթականներին՝ վիճելի տարածքները Ադրբեջանի անբաժանելի տարածքներ հռչակելով: Իրենց այս կողմնակալ դիրքորոշումն արդարացնելու համար անգլիացիները հայտարարում էին. «...կարելի չէ բոլոր պահանջները հիմնաւորել զուտ ազգագրական պայմաններով. ասոնք բաւական չեն, կարեւոր են նաև տնտեսական, աշխարհագրական և ռազմագիտական պայմանները...»[3]: Իսկ այդ գործոններն, ըստ անգլիական կողմի, ենթադրում էին վիճելի տարածքների միացումը Ադրբեջանին:

Բնականաբար անգլիական կողմի նմանօրինակ քաղաքականությունն ոգևորում էր Ադրբեջանին, որը նոր թափով շարունակեց կռիվը Արցախը նվաճելու համար. 1919 թ. սկզբին Շուշիի, Զանգեզուրի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի գավառներից ստեղծվեց գեներալ-նահանգապետություն՝ մոլի մուսավաթական

---

[1] Տե՛ս Աբրահամյան Հր., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 66-67:
[2] Տես «Զանգ», Երեւան, 24 նոյեմբերի, 1918թ.:
[3] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 168:

գործիչ, ազգությամբ քուրդ Խոսրով Բեկ Սուլթանովի գլխավորությամբ: Արցախահայությանը վիճակված էր ապրելու դժվարին փորձությունների մի նոր փուլ, որը մեկ անգամ ևս պետք է հավաստեր վերջինիս անկոտրում կամքն ու համառ պայքարը՝ ազատ գոյության իր իրավունքի պաշտպանության համար:

Անի Խաչատրյան, Գայանե Հովհաննիսյան

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1917-1918 ԹԹ.)

Բանալի բառեր՝ *Հայաստանի անկախացում, հայ-ադրբեջանական հակամարտություն, ռուսական հեղափոխություններ, արցախահության համագումարներ*

Ներկայացվող թեմայի շրջանակներում փորձ է արվել լուսաբանել Արցախյան հակամարտության սկզբնավորման վաղագույն՝ 1917-1918 թթ. իրադարձությունները: Ներկայացվել է ռուսական երկու հեղափոխություններից հետո Արցախում ստեղծված դրությունը, Ադրբեջանի և նրա հովանավորյալ Թուրքիայի ոտնձգությունները երկրամասի նկատմամբ: Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի սկզբանե արտահայտելով իր անկախ և ազատ ապրելու կամքն ու ձգտումը, արցախահայությունը լի էր վճռականությամբ՝ շարունակելու պայքարը ժողովուրդների ազատ ինքնորոշման իր իրավունքը հաստատելու:

Ани Хачатрян, Гаяне Оганнисян

РОССИЙСКИЕ РЕВОЛЮЦИИ И ПРОИСХОЖДЕНИЕ АРЦАХСКОГО КОНФЛИКТА (1917-1918ГГ.)

Ключевые слова: *независимость Армении, Армяно-азербайджанский конфликт, русские революции, конференции Арцахского народа*

Основной проблемой нашего исследования является выяснение и представление ранних событий Арцахского конфликта в 1917-1918 гг. Мы показали ситуацию в Арцаха после двух русских революций и нашествия Азербайджана с его спонсором Турции против Арцаха. Во время изучения печатных материалов и архивных документов, мы пришли к выводу, что армянские жители Арцаха излагают свою справедливую волю и стремление жить свободно и независимо на собственной земле. И по этому они с настойчивостью продолжили борьбу, чтобы установить свое право на свободное самоопределение.

Ani Khachatryan, Gayane Hovhannisyan

RUSSIAN REVOLUTIONS AND THE ORIGIN OF ARTSAKH CONFLICT (1917-1918)

Key words: *independence of Armenia, Armenian–Azerbaijani conflict, Russian revolutions, conferences of Artshakh nation*

The main problem of our research is to elucidate and to present the early events of Artshakh conflict in 1917-1918. We presented the situation in Artshakh after two Russian revolutions and the inroad of Azerbaijan and his sponsor Turkey against Artshakh. Studying whole printed materials and archive documents we may conclude that the Armenian inhabitants of Artshakh enunciated their will and aspiration to live free and independent on their own land. They continued the fight with perseverance to establish their right of people to self-determination.